ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

“ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ”
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

“ASSESSMENT AND TESTING CENTER”
STATE NON TRADE ORGANIZATION

ք.Երևան, Այգեստան փ. 9/4
Հեռ. 57 63 37
E-mail: info@atc.am

Aygestan str. 9/4,Yerevan
Tel. 57 63 37
E-mail: info@atc.am

№ 02-248 «23» 12. 2019թ.

<<Նորմա Պլուս >> ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Դ.ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Ք.ԵՐԵՎԱՆ . ՄԱՇՏՈՑԻ 2/60

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն մասնակի միակողմանի լուծելու մասին

Գնահատման և թեստավորման կենտրոն ՊՈԱԿ և <<Նորմա Պլյուս>> ՍՊԸ ի միջև 25.07.2019 թվականին կնքված <<ԳԹԿ-ԳՀԱՊՁԲ-19/04-2>> ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն <<Վաճառողը պարտավորվում է սահմանված կարգով ,ծավալներով,ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել տպագրական սարքի բաղադրիչ մասեր (Այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը վճարել դրա համար:

Պայմանագրի համաձայն Ապրանքի մատակարարումը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը 2-րդ չափաբաժնի մասով լրացել է 31.08.2019 թվականին և Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն ՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ Պարտավորության ուժով մի անձը պարտավոր է մեկ այլ անձի օգտին կատարել որոշակի գործողություն .այն է ՝ վճարել դրամ,հանձնել գույք,կատարել աշխատանք ,մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ գործողություն կատարելուց,իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտել է համարվում ,եթե խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում,երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով ,որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները 2-րդ չաձաբաժնի մասով տպագրական սարքի թմբուկի մատակարարում Գնահատման և Թեստավորման Կենտրոն ՊՈԱԿ-ը ղեկավարվելով վերը նշված հիմքերով,միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ԱպրանքներիՄատակարարման պայմանագրից՝համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված 2-րդ չափաբաժնի մասով և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործնթացի կազմակերպման մասին Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Փաշայան